

Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց Հայրապետական սուրբ օծումն ընդունել ամսոյս 10 ին, ուստի Սինօգր Նորին Վեհափառութեան այս անօրէնութիւնը հեռագրով յայտնեց ամենայն ուրեք Կ. Պօլսոյ Պատրիարքարանի, Առաջնորդների, վիճակային Ատեանների, Յաջորդների: Հոգևոր Կառավարութեանց և այլ պաշտօնական անձանց միջոցաւ:

Օժման արարողութեան համար սահմանուած էին հետևեալ կարգադրութիւնները:

Կ Ա Ն Ո Ն

ՆԱԻԱԿԱՏԵԱՑ ՕԾՄԱՆ ԿԱԹՈՒՂՈՍԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յերեկոյի շաբաթուն զգեստաւորեալ ամենայն միաբանութիւն Մայր Աթոռոյս՝ խաչօք, խաչվառօք, կերօնօք, բարվառօք և ամենայն եկեղեցական զարդօք եկեայեն ի նախադուռն Վեհարանի, ուստի առեալ զՎեհափառ Հայրապետան ընդ հովանոցաւն (ամպհովանի)՝ հանգիսիւ, և զ«Հրաշափառ Աստուած» շարականն երգելով՝ տանեն յեկեղեցին, ուր առաջի Եջման տեղւոյ սեղանայն կանգնեալ Հայրապետն՝ ասասցէ զՍաղմօսն «Ուրախ եղէ ևս այք ասէին ցիս» • և այլն ըստ կարգին:

Յաւարտ որոյ՝ երկու հասակաւոր և խրոխտաձայն դպիրք ասասցեն «Խոնարհեց՛ և «Ապրեց՛» Սաղմօսն • իւր սարօքն •

«Սուրբ Աստուած որ խաչեցար» • յատեանն ասասցեն: Համբարձի • Եկեղեցւոյ «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» •

Զկնի ասասցեն Կեց՛ • և լն •

Յետ այսորիկ պաշտեսցեն զկարգ Հանգստեան (Եկեսցէի) •

Զ«Հաւատով խոստովանիմ» ն ասասցեն տուն առ տուն Գրիգոր Արքեպիսկոպոսն և Մեսրոպ Եպիսկոպոսն •

Զկնի «Փառք քեզ Տէր Աստուած մեր» • ասասցէ Ղևոնդ վարդապետն:

Ապա՝ պաշտեսցեն զառաւօտեան ժամերգութիւնն սկսեալ ի «Տէր զի բազում» էն մինչև ցՀարցն •

Իսկ ի 6-րդ ժամու առաւօտու կիւրակէին՝ սկսանիցին հարկանել զզանգակսն և ասել զՀարցն իւր սարօքն հանդերձ՝ կատարելով զտօն Եկեղեցւոյ:

Զպաշտօն ժամօրհնողութեան կատարեսցէ Գրիգոր Արքեպիսկոպոսն յերեկոյէ Շաքաթուն ցվերջ պատարագին:

Կ Ա Ն Ո Ն

Վ Ա Ս Ն Կ Ա Ր Գ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Ն Դ Ի Ս Ի Օ Ծ Մ Ա Ն Վ Ե Հ Ա Փ Ա Ռ
Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ի Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց

Տ • Տ • Մ Ե Կ Ե Բ Ե Յ •

ՈՐ ՈՒՆԻ ԿԱՏԱՐԻԼ Ի 10-Ն ՆՈՅԵՄԲԵՐԻ ԱՅՍԻ 1885 ԱՄԻ.

Յարժամ ընտրեալն ի Հայրապետութիւն՝ ի ժամ կատարման հանդիսի Օծման՝ յետ ասելոյ «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» և լն. աղօթիցն՝ անկանի ի ծունկս յԱւագ սեղանի Տաճարին, և երկուտասան եպիսկոպոսուքն զգեստաւորեալք՝ կացցեն շուրջանակի Հայրապետին ի սեղաննի անդ, սկսանի կարգ Օծմանն:

Նախ՝ երկու եպիսկոպոսուք Արիստակէս և Գէորգ՝ ասասցին տուն առ տուն զՍաղմոսն ԶԼ. «Զողորմութիւնս քո Տէր յաւիտեան օրհնեցից» . մինչև զայն տունն՝ որ ասէ «Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զաթոռ քո»:

Յետ որոյ՝ Ներսէս Եպիսկոպոսն ասասցէ զքարոզն «Ազաչեսցուք զմարդասէրն Աստուած» : և այլն

Ապա՝ Մկրտիչ Արքեպիսկոպոսն ասասցէ «Աստուածային և երկնաւոր շնորհ» : և այլն

Յետ որոյ՝ երկուտասան եպիսկոպոսուքն միանգամայն՝ դնելով զձեռս (զգուշութեամբ) ի վերայ գլխոյ Հայրապետին՝ միասին և միաբերան ծանր առողանութեամբ բառ առ բառ ասասցեն «Մեք դնեմք ձեռս ի վերայ» : և այլն

Ապա՝ Գրիգոր Արքեպիսկոպոսն ընթերցցի զաղօթս «Գոհանամք զքէն Աստուած մշտնջենաւոր» : և այլն

Յետ այսր՝ Սերուբէ Եպիսկոպոսն ընթերցցի զգիրքն Ելից «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի» :

Թագէտս Եպիսկոպոսն ընթերցցի զգիրքն Բ. Թագաւորու թեանց
« Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէլի » :

Մետրուք Եպիսկոպոսն ընթերցցի զգիրքն Եզեկիէլ Մարգա-
րէի « Եւ եղիցի ի մտանել քահանայից » : և այլն

Յովակիմ Եպիսկոպոսն ընթերցցի զգիրքն Եսայեայ Մարգա-
րէի « Բայց դուք քահանայք Տեառն կոչեսցիք » :

Երեմիա Եպիսկոպոսն ընթերցցի զգիրքն Պետրոսի Առաքելոյն
« Ի բայ թօթափել ոյսուհետեւ » :

Սուքիաս Եպիսկոպոսն ընթերցցի զԱւետարանն Մատթէոսի
« Եւ ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ » : ասացէ և զ« Հաւա-
տամք » ն, և վերաբերեսցէ զսուրբ Խորհուրդն :

Եւ մինչ հասանեն ց Ողջոյնն՝

Գրիգոր Արքեպիսկոպոսն ձայնակից ունելով զՍարկաւազ
Դաւիթն ի միոյ դասէ. իսկ Մետրուք Եպիսկոպոսն ձայնակից ու-
նելով զՂեոնդ վարդապետն ի միւս դասէ՝ ասացեն բարձրաձայն
տուն առ տուն զքարոզն « Աստուած մե՛ծ և սքանչելագործ զօ-
րութիւն » :

Յետ ձայնաւոր քարոզիս՝ Մկրտիչ Արքեպիսկոպոսն ընթերցցի
զաղօթս « Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց » : և այլն

Յետ որոյ նոյն ինքն Մկրտիչ Արքեպիսկոպոսն առեալ ի սեղա-
նոյն զԱղաւնին Միւռոնի, և եկեալ առ Հայրապետն՝ որ ի ծունկս
անկեալ իցէ, հեղցէ զՍուրբ Միւռոնն ի վերայ գագաթան Հայրա-
պետին՝ առելով բարձրաձայն՝ ձայնակցութեամբ ամենեցուն :

« Առաքելոյ աղաւնւոյ » : և այլն

Եւ երկրորդ անգամ հեղլով ասացէ.

« Աննիւթական Աղաւնի » : և այլն

Եւ երրորդ անգամ հեղլով ասացէ :

« Օրհնութիւն ի՛ բարձունս » : և այլն

Իսկ զպիրքն ի վերջ շարականիս ասացեն ձայնիւ ծանր և
քաղցր « Ամէ՛ն Ալէլուիա՛, ալէլուիա՛ » :

Եւ երկուտասան Եպիսկոպոսուքն իմիասին զհեղեալ ի գա-
գաթ Հայրապետի զՄիւռոնն՝ բոյթ մատամբ իւրեանց նկարեսցեն ի
վերայ գագաթանն յիւրաքանչիւր կողմանց, և ընդ նմին ամենե-
քեան միաբերան ասացեն ձայնիւ « Օրհնեսցի՛, Օծցի՛ և Սրբեսցի՛
գագաթ **ՏԵՐ ՄԱԿԱՐ** Կաթուղիկոսիս » : և ըն

Յետ Օծմանն ապա՝ Մկրտիչ Արքեպիսկոպոսն առեալ յԱւագ

լուսարարէ զՀայրապետական սպիտակ քօղն՝ արկանէ (զգուշութեամբ) ի վերայ գլխոյ Հայրապետին. նոյնպէս ստանալով յԱւագ լուսարարէ զՀայրապետական Աօնքեռն կապէ զգօտեաւ Հայրապետին յաջոյ կողմանէ, և սոյ ի ձեռս զՀայրապետական Գաւազանն:

Զայսոսիկ՝ զքօղն, զկօնքեռն եւ զգաւազանն Աւագ Լուսարարն պարտէ նախապէս ի պատրաստի ունիլ առ ընթեր սեղանոյն:

Բայց գպիրքն ի ժամ յիշեալ գործողութեանց՝ այն է յարկանելն զքօղն, ի կապելն զկօնքեռն, եւ ի տալն զգաւազանն, երգեսցեն զՇարականն ԳՁ. « Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնք » . եւ « Որք արժանաւորեցայք գալ » . եւ այլն

Յետ այսր՝ Արխտակէս Եպիսկոպոսն ասացէ զԱազմոս ԻԲ. « Տէր հովուեսցէ զիս » և այլն

Իսկ Գէորգ Եպիսկոպոսն ասացէ զմիւս տունն. « Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս » :

Ապա Գրիգորիս Եպիսկոպոսն ընթերցի զգիրքն Պետրոսի Աւագիւոյն « Զերիցունս այսուհետեւ աղաչեմ » -

Յետ որոյ՝ Մեսրոպ Եպիսկոպոսն ընթերցցի զԱւետարանն Յօհաննու « Եւ իբրև ճաշեցին » . և այլն

Եւ յաւարտիլն գպիրքն երգեսցեն զՈղջոյնն: Եւ Եպիսկոպոսունքն համբուրելով զգօգաթ Հայրապետին տան զողջոյնն ըստ կարգին.

Եւ Հայրապետն այնուհետեւ կատարէ զխորհուրդ սուրբ Պատարագին.

Իսկ զգեստաւորեալ Եպիսկոպոսունքն կացցին յաջմէ և յայակէ սեղանոյն ցաւարտ Պատարագին:

Յաւարտ սրբոյ Պատարագին գպիրքն երգեսցեն զԳՁ. Շարականն. « Հրաշափառ Աստուած » . և թափօր կազմեալ բովանդակ ուխտին միաբանութեան զգեստաւորեալ ըստ կարգին՝ զանգակահարութեամբ տանեն զՀայրապետն ի Վեհարանն բուրլառօք, խաչօք և խաչվառօք. և ի մտանելն Հայրապետին ի ծաղկեալ գահլիճ Վեհարանին՝ գպիրքն երգեն զՇարականն ԳՁ. « Այսօր Քահանայապետ ճշմարիտ » . և այլն

Յետ որոյ՝ Սարկաւազն քարոզէ « Սուրբ խաչիւս » . և Հայրապետն ասէ « Պահպանիչ, Հայր մեր և Օրհնեալ եղերուք », և նստեալ յԱթոռ հանգստանայ, որ և ապա՝ ամենեքեան մատչին

ի համբոյր Ածոյ նորապսակ Արբոյ Հայրապետին. և ընկալեալ զՀայրապետական օրհնութիւնն՝ արձակին ի խաղաղութիւն և ի խնդակցութիւն միմեանց » :

Ըստ տպեալ հրահանգութեանցս ամսոյս Գին 3¹/₂ ժամին յետ ճաշու՝ յատկայեալ զանգակաց երրեակ հնչմամբ մայր Աթոռոյս միաբանութիւնը, զանազան տեղերից եկած հոգևորականք և ձեմարանի երգեցիկ աշակերտք խմբուելով եկեղեցի կազմ և պատրաստ, եկեղեցական սպասուք և բոլոր զարգերով դուրս դալով եկեղեցուց, զոյգ զոյգ կանգնեցին Ահարանի արտաքին դրան առաջ:

Ահարանից մինչև տաճարը ճանապարհի երկու կողմից ընդ երկայնութիւն սլատնէշ կանգնած էին ձեմարանի աշակերտք ուսուցիչների, վերակացուների և Տեսչի առաջնորդութեամբ: Թափօրը կազմած էր ըստ այսմ կարգ ըստ կարգէ.

«• երկու շաթիրք կարմիր վերնազգեստներով՝ արծաթագլուխ սասաները ձեռքներին:

Բ• խաչ խաչվառակիրք զոյգ զոյգ:

Գ• երգեցիկ աշակերտք ժամաշապիկներով:

Դ• քահանայք վարդապետք և եպիսկոպոսներ, շուրջառաւորեալք երգեցիկների երկու կողմից:

Ե• բուրվառակիր երկու վարդապետք և երկու սարկաւազուէք ժամաշապիկ հագած ուրարներով ուս ընդ անութ պատեալ:

Զ• Հայրապետական դրօշակիր խաչ և գաւազան կրող երկու վարդապետք:

Է• Հայրապետական ոսկեթել նկարէն քօղ կրօղ երկու դպիրք:

Ը• Հովանին՝ որ կրումէին շուրջառաւորեալ չորս քահանայք:

Ահափառ Հայրապետը ի ձայն զանգահարութեանց իջաւ վահարանից, մտաւ վերամբարձ հովանու տակ, ընդունեց լուսարարապետ եպիսկոպոսից շուրջառ, խաչ և գաւազան, բուրվառակիրք « Եւ ևս խաղաղութեան » քարոզն սասցին և Նորին Ահափառութիւն « Թրհնութիւն և փառք » մաղթանքը արտասանելուց յետոյ, երգեցիկները խմբապետութեամբ ձեմարանի աւագ վերակացու Աւոնդ վարդապետի եղանակեցին « Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող » շարականը:

Թափօրը շարժուեց գէպի եկեղեցի, իսկ Ահափառ Հայրապետը յաջ և ի ձախ խաչակնքելով օրհնութիւն էր բաշխում խոնեալ

ժողովրդեան: Քափօրը երբ հասաւ եկեղեցուն, երգեցիկները սկսեցին « Աւրախ լեր սուրբ եկեղեցի » շարականը: Եկեղեցի մտնելուց յետոյ Ս. Իջման խորանի առաջ Նորին Վեհափառութիւնը քաղեց « Աւրախ եղէ ես, ոյք տաէին ցիս ի տուն Տեառն երթիցոյք մեք » սաղմոսը, « Ի մէջ տաճարիս » աղօթքը ասելով երկրպագեց սուրբ սեղանին և « Պահպանիչ » ուլ ժողովրդեանը օրհնելուց յետոյ, դասի մէջ տեղը դրուած գահաւորակի վերայ բազմեց: Ժամերգութիւնը սկսուեց Ս. Իջման տեղի առաջ՝ յատենի, ժամը օրհնումէր Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան, միաբանական ուխտը շուրջառաւորեալ՝ կանգնեցին յատենի, քարոզները սասցին բուրվառակիր երկու վարդապետքն: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, որ կատարուեց ըստ սօնի եկեղեցւոյ, Նորին Վեհափառութիւնը շուրջառը, խաչը և գաւազանը յանձնելով Նուսարարայեո եպիսկոպոսին, գնաց և կանգնեց յետին դասի հայրապետական Աթուի գմբեթարտի մէջ, եկեղեցւոյ ուխտն ևս գնալով սահարանները՝ այնտեղ հանեցին շուրջառները, շապիկները և լն, և փիլոնով միայն կանգնեցին դասերում: սկսուեց հանգստեան աղօթքը (եկեցեց) և հսկումն գիշերապաշտօնիւ՝ մինչև « Հարց »ը:

Վերակէ առաւօտը 6 ըրդ ժամին սկսուեց մնացեալ ժամը գութիւնը, որ աւարտուելուց և փոքր ինչ հանգիստ առնելուց յետոյ 9 ըրդ ժամին դարձեալ յատկացեալ զանգակաց երրակի հնչմամբ տասն և երկու եպիսկոպոսք գնացին Վեհարան իսկ միաբանութիւնը՝ Եկեղեցի: Վեհափառ Հայրապետը՝ Մաղկեալ, իսկ եպիսկոպոսք Վեհարանի Ընդունելութեան գահլիճներում զգեստաւորուեցին: Եպիսկոպոսք կրումէին միայն պնակէ իսկ Վեհափառ Հայրապետը՝ և ոչ այն:

Միաբանք և եկեղեցւոյ ուխտը կազմ և պատրաստ շուրջառաւորեալ եկեղեցւոյ բոլոր զարդերով, խաչ խաչփառով, քահարով և մամեղէններով կանգնեցին Վեհարանի արտաքին դրան մօտ:

Ճանապարհի երկու կողմը երկայնութեամբ մինչև եկեղեցու գուռը պատնէշ կանգնած էին Երեւանից բերուած զինուորները ընդ հսկողութեամբ իրանց սպայից և տեղական սասիկանութեան աստիճանաւորաց:

Եկեղեցական թափօրը կազմած էր ըստ այսմ.

Ա. Կարմիր վերնազգեստ հագած զոյգ շաթիրներ արծաթագլուխ ասաները ձեռքներին:

Բ. Խաչ խաչվառք և ջահք զոյգ զոյգ:

Գ. Երգիչք ժամաշապիկներով:

Դ. Հոգևորական դասը շուրջառաւորեալ՝ մէջ առած երգիչներին:

Ե. Բուրվառակիր երկու վարդապետք և երկու սարկաւազուք:

Զ. Հայրապետական դրօշակիր խաչ և գաւազան բռնող երկու վարդապետք:

Է. Հովանին՝ որ կրումէին շապիկ և փորուրար հագած չորս վարդապետք:

Ի ձայն զանգահարութեանց Վեհափառ Հայրապետը վայր իջաւ Վեհարանից տասն և երկու եպիսկոպոսք զոյգ զոյգ առաջից յաջմէ և յահեկէ Հայրապետին գնում էին երկու վարդապետք շապիկ և փորուրար հագած, այս վարդապետներից մինը սքօլեալ սկուտղի վերայ կրումէր Հայրապետական քօղը և երդմնաթուղթը, իսկ միւսը՝ նոյնպէս սքօլեալ սկուտղի վերայ կրումէր Հայրապետական կանքեւը: Հայրապետին հետընթաց մի վարդապետ շապիկով և փորուրարով, Հայրապետի զգեստի քղանցքն ունէր մի վարդապետ ևս շուրջառաւորեալ՝ Հայրապետի ձեռքի գաւազանը:

Յառաջընթաց զգեստաւորեալ 12 եպիսկոպոսք տեղի կալան բուրվառակիրների և շուրջառաւորեալ հոգևորականաց մէջտեղը զոյգ զոյգ ըստ այսմ:

Ա. Արիստակէս եպիսկոպոս Քիֆլիզու և Գէորգ եպիսկոպոս Երևանայ:

Բ. Գրիգորիս եպիսկոպոս Կարուց և Ներսէս եպիսկոպոս՝ անդամ Սինօղի:

Գ. Երեմիա եպիսկոպոս՝ անդամ Սինօղի և Սուքիաս եպիսկոպոս Աստրախանայ:

Դ. Մեսրոպ և Յովակիմ եպիսկոպոսք անդամք Սինօղի:

Ե. Սերափէ եպիսկոպոս միաբան Ս. Էջմիածնի և Քաղէոս եպիսկոպոս Շամախույ:

Զ. Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան՝ Ղարաբաղու և Մկրտիչ Արքեպիսկոպոս Տեղապահ:

Երբ Հայրապետը մտաւ վերամբարձ հովանու տակ, հայրապետական քօղը և կօծքեռ կրօղ վարդապետները կանգնեցին յաջմէ և յաճեկէ: Նկարէն՝ քօղը որ այսպիսի թափօրներին պէտք էր կրել զառաջեալ Հայրապետին՝ չըկար այս անգամ:

Գպիլք « Խորհուրդ խորին » էին երգում և թափօրը ըստ ակնարկելոյ Հայրապետին՝ շարժուեց:

Նկեղեցական թափօրին հետեւում էին

Վառափարութեան Ներկայացուցիչ Տայնի սովեանիկ Պրերիլ, Երևանու Նահանգապետ Գեներալ Մայեօր Շալիկով և ուրիշ բարձրատիճան անձինք, Երևանու քաղաքագլուխ Վասիլ Գեղամեան իւր վարչութեան անդամներով և դումայի Հայ ու Թուրք մի քանի իրաւասուներով և այլք:

Ժողովուրդը խառնուած էր տանեաց վերայ և բազում, կարգ էին պահում զինուորների հետ եկած սպաները և Վաղարշապատու ոստիկանութեան պաշտօնեայքը:

Նկեղեցական թափօրը մտաւ եկեղեցի և զկայ առաւ Աւագ սեղանի առաջ. երգեցողութիւնը դադարեց և Վեհափառ Հայրապետը բարձրաձայն քաղեց « Լուացից սրբութեամբ » սաղմոսը, սպասաւորումէր Սուքիաս Եպիսկոպոս. յաւարտ՝ գպիլք եղանակեցին « Թագաւոր Երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան », և Վեհափառ Հայրապետը խաչակնքեց ժողովրդեան վերայ. յատկացեալ պատարագչի հրապարակական խոստովանութեան արարողութիւնները կատարելուց յետոյ, Վեհ. Հայրապետը « Մտից առաջի սեղանոյ » սաղմոսը քաղելով բարձրացաւ սեղան: Ուր և ի ծունկս խոնարհեալ քաղեց Նարեկի աղօթքը գլխաբաց. թագը կրումէին Լուսարարապետ Երեմիա և Սուքիաս Եպիսկոպոսները յետուստ կուսէ կանգնած ընդ աջ և ընդ ձախ, իսկ խորհրդատեարը ունէին հայրապետական քօղ և կօծքեռը կրօղ երկու վարդապետք, գպիլք « Ընտրեալ » մեղեդին էին եղանակում. յաւարտ՝ բեմի վերայ եղողներից մինը « Թրհնեա Տէր » եղանակեց և Հայրապետը ընդունելով ի գլուխ թագը, կանգնեց և « Զի քօ է, կարողութիւն » մաղթանքը սասաց. փակուեց սեղանի վարագոյրը սպաս դնելու համար:

Պատարագի արարողութիւնը շարունակուեց մինչ դիրքը: Գրքի ժամանակ Վեհ. Հայրապետը փոքր ինչ առաջ գալով երես առ ժողովուրդն չոքեց. Տփխխու Արխատակէս և Երեւանայ Քէարգ եպիսկոպոսները քաղեցին ՁԸ-րդ սաղմոս « Զողորմութիւն քո Տէր յաւիտեան » մինչև « Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զաթոռ քո »: Ներսէս Եպիսկոպոսը « Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած » քարոզը. իսկ Մկրտիչ Արքեպիսկոպոսը՝ « Աստուածային և երկնաւոր շնորհս » աղօթքը, յետոյ 12 եպիսկոպոսները ծնկաչոք Հայրապետի շուրջը բոլորելով և ձեռքները Հայրապետի գլխին դնելով միաբերան առացին. « Մեք դնեմք ձեռս ի վերայ » և այլն:

Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանցը « Քոհանամք զքէն, Աստուած մշանջենաւոր », աղօթքը կարգաց. իսկ Սերովբէ, Թապէաս, Յովակիմ, և Երեմիա եպիսկոպոսները յատկացեալ գրքերը կարդացին:

Հայրապետը յօտին կանգնելով սեղանի առաջը գնաց. Սուքիաս եպիսկոպոսը կարգաց Աւետարանն ու « Հաւատամքը », և ի ժամանակին՝ Սուրբ Խորհուրդը վերաբերեց:

« Ողջոյնի » ժամանակ Հայրապետը փոքր ինչ առաջ գալով՝ երես ընդ արևելս կարգաց հեռեւեալ երդնմնաթուղթը,

ԵՐԴՄ ՆԱԹՈՒԻՂԹ:

Նս ի ներքոյ անուանեալս խոստանամ և երգնում յանուն Ամենակարողին Աստուծոյ, զի կամիմ և պարտեմ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ՝ իմոյ իսկական և յատուկ ԱՄԵՆՈՂՈՐՄԱԾ ՄԵԾԻ ԹԱԳԱԻՈՐԻ ԵՒ ԿԱՅՍԵՐ ԱԼԷՔՍԱՆԴԻ ԱԼԷՔՍԱՆԴՈՎՁԻ՝ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ ԵՒ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԱԹՈՌՈՅ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՅ ՕՐԻՆԱԻՈՐ ԺԱՌԱՆԳԻ ՆԻԿՈՒԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՈՎՁԻ ծառայել հաւատարմութեամբ և անկեղծօրէն և յամենայնի հնազանդել, ոչ խնայելով առ այն զկեանս իմ ց յեօտին կաթիլ արեան իմոյ և ամենայն որ ինչ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ զօրութեան և իշխանութեան օրինադրեալ և օրինադրելի իրաւունք իցեն և արածնութիւնք, ըստ շափու իմանալոյ իմոյ զօրութեան և հնարաւորութեան պահել և սաշտոպանել և ամենայն զօրութեամբ գոն գործել նպաստամատոյց լինել յամենայնի ի դէպս՝ որք ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ հաւատարիմ ծառայութեան և

շահու Պետութեան վերաբերիցին, իսկ երբ իրազգաց եղէց զկորստենէ և զվնասուց շահու ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, ոչ միայն ածապարել ի յայտ ածել կանխագոյն, այլ նա և ամենայն հնարիւք ջանալ խափանել զայնոսիկ, և զամենայն ինձ հաւատացեալ խորհուրդս պահել պնդութեամբ. նա և զեղեալ ի վերայ իմ և զհաւատացեալ ինձ պաշտօնն վարել պարտ և պատշաճ եղանակաւ, ըստ խղճի մտաց իմոց և համաձայն այժմու ընդհանուր և առանձին սահմանադրութեանց այնպէս և համեմատ ժամանակէ առ ժամանակ յանուն ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ յիմ վերայ նշանակեալ իշխանաւորաց արձակեալ հրովարտակաց և հրամանաց. իսկ վասն շահասիրութեան, ազգակցութեան, բարեկամութեան կամ չարակամութեան չլնիժանալ ընդդէմ պարտաւորութեան իմոց և երգմանս և վարել այնպէս, որպէս պատկանաւոր և բարեփայլին է հաւատարիմ հպատակի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, և որպէս զի կարացից ես յայնմ ամենայնի տալ պատասխանի առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի նորա, առ որ ինքնին Տէր Աստուած կարողացուցէ զիս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Ի կնիք երգմանս համբուրեմ զբան և զխաչ փրկչին իմոց. ամէն: Ի 10 Նոյեմբերի 1885 ամի ի Ս. Էմիաճին:

Ըստ այսմ երգմնաթղթոյ երդուայ.

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Երգմնեցուցի Վառավարիչ թեմին Հայոց Արցախայ Գրեգոր Արքեպիսկոպոս:

Նորին Վեհափառութիւնը Երգմնաթուղթը սեղանի վերայ գրնելուց յետոյ դէմ յանդիման ժողովրդեան՝ ծունկ չոքեց. սեղանի վերայ եղողները դաս առ դաս առաջնորդութեամբ Գրիգոր Արքեպիսկոպոսի և Մեսրոպ Եպիսկոպոսի՝ սկսեցին «Աստուած մե՞ծ և սքանչելագործ զօրութիւն» քարոզը եղանակել. Մկրտիչ Արքեպիսկոպոսը «Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց» երկար և սրտաբուզի աղօթքը կարդաց, յաւարտ՝ նոյն իսկ Մկրտիչ Արքեպիսկոպոսը լուսարարապետից ընդունելով ս. Միւռոնի արծաթեայ սակեղօժ աղաւնին յաջմէ և յահեկէ ունելով զգեստաւորեալ Եպիսկոպոսներին՝ ձայնակցութեամբ նոցա սկսեց «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երեք տները, իւրաքանչիւր տունը սկսելիս ս. Միւռոնը կաթացնելով Հայրապետի գագաթին. յաւարտ գր-

պիրք սկսեցին եղանակել. « Ամէն Ալէլուիա, Ալէլուիա ». իսկ եպիսկոպոսները բոյժ մատով հեղեալ սուրբ միւռոնը ծաւալելով Հայր սպետի գլխի վերայ մի սրբեբան ասացին « Օրհնեսցի, Օծցի և սրբեսցի գագաթ Տէ՛ր ՄԱԿԱ՛Ր Կաթողիկոսիս » . . . :

Օծումից յետոյ գպիրները երբ « Այսօր Աստուածութիւնն զուարճանայ » շարականն էին երգում, Մկրտիչ Արքեպիսկոպոսը լուսարարապետից առնելով հայրապետական թափանցիկ սպիտակ քօղը եղերաւորեալ ոսկեթել ծոպերով՝ ձգեց Օծեալ Հայրապետի գլխին շուրջանակի ցփօտին սքօղելով: Առաւ և կօնքեօր և աջ կողմից կախեց գօտիից. դրուեց հայրապետական գահաւորակը և Հայրապետը գահաւորակի վերայ բազմելուց յետոյ, դարձեալ Մկրտիչ Արքեպիսկոպոսը առաւ լուսարարապետից գաւազանն ու ձեռքի խաչը և մատուցանելով Օծելոյն՝ ի ծունկ իջեալ համբուրեց Հայրապետի Աջը և օծեալ Գագաթը: Մետրոպ եպիսկոպոսը գրաւոր ասենարանութիւն անելուց յետոյ, բոլոր զգեստաւորեալ եպիսկոպոսները ի ծունկ իջեալ համբուրեցին Հայրապետի Աջն և օծեալ Գագաթը: Յետոյ Արիստակէս և Գէորգ եպիսկոպոսները քաղեցին ԻՖ. Սաղմոս « Տէր հովուեսցէ զիս », մինչ « ի վայրի դալարւոջ » Գրիգորիս եպիսկոպոսը կարդաց Պետրոսի առաքելոյ « Ջերիցունս այսուհետև աղաչեմ » գիրքը, իսկ Մետրոպ եպիսկոպոսը Յովհաննու « Եւ իբրև ձաշեցին » աւետարանը: Յաւարտ՝ սարկաւազները ձայնեցին « Ողջոյն սուք » միմեանց. զգեստաւորեալ եպիսկոպոսները համբուրելով Հայրապետի Աջն ու օծեալ Գագաթը՝ առան ողջոյն և հաղորդեցին բոլորին. Հայրապետը մատչելով սեղանին շարունակեց պատարագը սքօղեալ դիմօք:

Սուրբ պատարագը աւարտուելուց յետոյ Օծեալ Հայրապետը նոյն հանդերձանքով, ինչպէս եկեղեցի էր եկել, զգեստաւորեալ ինքն և եպիսկոպոսք, գնաց Աեհարան ի ձայն զանգահարութեանց՝ գպիրք եղանակումէին « Հրաշափառ Աստուած » շարականը:

Օծեալ Հայրապետը երբ մտաւ Ծաղիկեալ գահիճը, գպիրք երգեցին « Այսօր քահանայապետ ճշմարիտ » շարականը. Օծեալը բազմեց գահիճի ճակատին բարձրավանդակի վերայ դրուած գահաւորակի վերայ, և կարգ ըստ կարգէ մասեան ի համբոյր աջոյ Օծելոյն զգեստաւորեալ եպիսկոպոսք, ուխտ սուրբ եկեղեցւոյ և աշխարհական պատուաւոր անձինք: Առաւովարտութեան ներկա-

յայտուցիչ Տայնի սուլեանիկ Պրերիլ նախ քան մատչելն ի համբոյր աջոյ Օծելոյն՝ ասաց.

« Ձերդ Վեհափառութիւն.

« Պատիւ ունենալով ի կողմանէ Բարձրագոյն Առաւելարութեան ներկայ լինել Ձերդ Վեհափառութեան Սուրբ Օծման հրաշափառ արարողութեանը, քաղցր պարտականութիւն եմ համարում ի կողմանէ Առաւելարչապետի Ազգանց Ասկասեան Գեներալ Ադիւսանտ Պայծառափայլ Իշխան Գանգուկով-Աորսակալի շնորհաւորել Ձեր Վեհափառութեան սուրբ օծումն և գահակալութիւնը ասթուոյն Հայաստանեայց եկեղեցւոյ հայրապետական իրաւամբ և իշխանութեամբ:

« Աղօթումենք որ Աստուած տայ Ձեզ կարողութիւն և երկար կեանք, Ձեր հոգևոր զաւակաց կրօնական բարւոք գաստիարակութեան համար »:

Օծեալ Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց դէպի Քաղաւոր Աայսրը, որ իւր արգարտէր պաշտօնեաների ձեռքով իւր չը պատակաց բարին տնօրինելով՝ ի մասնաւորի՝ սէր և հայրական խնամք է տածում դէպի Հայ ազգը: Շնորհակալութիւն յայտնեց և դէպի երկրիս Առաւելարչապետը նորա բարի ուշադրութեան համար:

Այնուհետև Երևանու Նահանգապետ Գեներալ Մայեօր Շալիկով Օծեալ Հայրապետի սուրբ աջը համբուրելուց յետոյ ի կողմանէ կանգնելով ներկայացրեց իւր հետ եղած բարձրաստիճան անձինքը, որոնց հետ էր նաև Երևանեան Նահանգի ռուս եկեղեցեաց բարեկարգիչ աւագ քահանայ Գամբուրով. Նորին Գերագանցութիւն Նահանգապետը, Երևանայ քաղաքագլխին և ս ներկայացնելով՝ ակդի տուեց քաղաքագլխին՝ որ սկսեց ներկայացնել իւր հետ եղածներին՝ որք էին, Երևանայ քաղաքային Վարչութեան անդամները, և Խորհրդարանի իրաւասուաց Հայ և Քուրք ներկայացուցիչները. Օծեալ Հայրապետը Վազարշապատու դիւանատանց պետերին և գլխաւոր աստիճանաւորներին, որք են Գաւառապետը՝ իւր օգնականներով, Հաշտարար գատաւորը իւր երկու քննիչներով և հաշտարար միջնորդը, աջ տալուց յետոյ, աջ տուեց և ուրիշ շատ պատուաւոր անձանց և երգեցիկ դպիրներին, այնուհետև առանձնացաւ զգետը հանելու համար. բոլոր ժամանակ զքօղուած էր Հայրապետական Քօղովը:

« Այլև այս է կանոն, զի յորժամ Հայրապետն ի յընթրիս բալմուլ կամիցի ընդ միաբանից և ընդ ում և իցէ, պարտի առաջի իւր ունել զյատուկ սեղան և զկերլիս և զըմպելիս, և զսպասաւորս զատեալ ի հասարակութենէն, Իսկ ի յանուկ ի ձեռն զառաջին բաժակն, ամենեքեան՝ որք գտանիցին ի յընթրիսն՝ կարգաւորք և աշխարհականք, յոտին կանգնիցեն և ժամասացն յառաջ կացեալ եղանակեացն բարձր ձայնիւ ի լուր ամենեցուն « Հրամայե՛ճէր, օրհնե՛մք ասել: Եւ Հայրապետն օրհնեացէ զամենեանսն ըստ պատշաճաւորութեան աւուրն և տեղւոյն, և նոյն երգիչքն նոյնպէս բարձր ձայնիւ երգեացն « ամբ, եղիցի՛ եղիցի՛ »: Եւ մինչ նոքա զայն երգեն, ըմպեացէ Հայրապետն զբաժակն, և ամենեքեան գլուխ խոնարհեցուցեալ Հայրապետին՝ բազմիցին ի ճաշ »:

Չամբո եր. 62—63.

Վեհափառ Հայրապետն, կէս ժամ հանգիստ առնելուց յետոյ քարհնածեց իջնել միաբանից սեղանատուն, ուր արդէն նստած էին բազմաթիւ անձինք հոգեւորականք և աշխարհականք: Երբ Օծեալ Հայրապետը մտաւ սեղան՝ բոլորը ոտքի կանգնեցին. Օծեալ Հայրապետը կանգնեց սեղանի արեւմտեան ճակատին կառուցուած գմբեթարդի մէջ. Մեսրոպ և Ներսէս եպիսկոպոսները քաղեցին սեղանի օրհնութեան յատկացեալ սաղմոսները, քարոզներն ու աղօթքները, իսկ Գրիգոր արքեպիսկոպոս Սազինեանց օրհնեց սեղանը, Օծեալ Հայրապետը բազմեց գահաւորակի վերայ, նստեցին սեղանակիցները, որք մօտ չորս հարիւր անձինք կը լինէին տեղաւորուած ձմեռնային և ամառնային սեղանատներում:

Գլխիւներից մինը բարձրացաւ ամբիոնի վերայ և սկսեց բարձրաձայն կարգալ Սարգիս Շնորհալու Վաթուղիկեայց մեկնութեան գիրքը:

Արգանտիւր մատակարարելիս երկու վարդապետք սեղանի միջանցքում կանգնած հանդէպ Օծեալ Հայրապետին՝ եղանակեցին « Հրամայեա՛ճէր օրհնութեամբ ասել » Օծեալ Հայրապետը օրհնեց Հայոց ազգը, հայ եկեղեցին, սուրբ Եջմիածինը և հայ հոգեւորականութիւնը. նոյն երգեցիկ վարդապետները եղանակեցին. « Ամէ՛ն. եղիցի, եղիցի »: Սկսուեց ճաշկերոյթը:

Օծեալ Հայրապետը սեղանը վերջանալուն մօտ Թագաւոր Վայսեր կենաց բաժակ առաջորկեց հեռեւեալ բանախօսութեամբ.

« Իմաստունն Սողոմոն ուսուցանում է մեզ խմտանարար թէ,
 « Գիտել պարտ է թէ, յուսմէ է շնորհն՝ » այսինքն թէ, եթէ
 վայելում ենք որ և է շնորհք, կամ բարութիւն, կամ հանգրս-
 տութիւն, պարտաւոր ենք նախ զգալ թէ ո՛վ է պատճառ այդ
 շնորհաց: 1582 ամօք քան զայս՝ հիմնարկեցաւ Արարատեան
 դաշտին մէջ Կաթուղիկէ Մայրս մեր Ս. Լջմիածին. և յընթացս
 այգքան դարաւոր ժամանակների՝ զահաւակեցին սրբոյ Հօրն մերոյ
 Քրիզորի Լուսաւորչի Աթոռոյն 135 հայրապետներ, այդ հայրա-
 պետաց մէջ սակաւ կը գտնուին, որք իրանց ժողովրդով հանդերձ
 բարութիւն և հանգիստ կեանք անցուցած լինին. ընդհակառակն,
 նոցանից շատերը ենթակայ եղած են զանազան հարստահարու-
 թեանց, հալածանաց և երբէք հանգստութիւն չեն կարողացած
 վայելել ի ձեռաց ժամանակի չար իշխողաց. զորօրինակ, Մեծն Սա-
 հակ Պարթեւ Ս. Հայրապետը, որ Հայաստանեայց եկեղեցւոյ հաս-
 տատութեան սիւնը և պայծառ ջահը կը համարուի իւր հայրա-
 պետութեան վերջին օրերը հայրապետական իշխանութենէն զր-
 կուած՝ իւր մահկանացուն կնքում է իւր հայրենի կալուածքն եզող
 Աշտիշատ գիւղի անկեան մէջ. նոյնպէս և Ս. Ներսէս Ենորհալի Հայ-
 րապետն մեր, Հայաստանեայց եկեղեցւոյ պարծանքը, ոչ պակաս
 քան զՍուրբն Սահակ ենթարկուած եղաւ ամեն տեսակ նեղութեանց
 և հալածանաց մինչ այն ատիճան, որ ստիպուած եղաւ ասել
 « Եւ մեք իբրև զայժեամն փախուցեալ յորտորաց՝ բնակիմք ի քա-
 րանձաւի աստ » այսինքն իւր աթոռը նմանեցուց քարանձաւի.
 Իսկ թէ ինչ է նշանակում քարանձաւը և ինչ մտքով է ասուած,
 ձեզանից հոգեւորական եղբարք գիտեն այդ, ուստի և կարող են
 չգիտցողներին հասկացնել: Բայց յօրէ անտի երբ Արարատեան աշ-
 խարհը մտաւ ընդ բարձրագոյն հովանաւորութեամբ Քրիստոսագօր
 Կայսերութեան Ռուսաց, ինչպէս կրվիայեն անշուշտ համայն միա-
 բանական հարք և եղբարք և սիրելի ժողովրդականք, այն օրուա-
 նից սկսած Հայաստանեայց Հայրապետական Աթոռը օր ըստ օրէ
 սկսաւ պայծառանալ, հոգեւորականութիւնը իւր բարձր նշանա-
 կութիւնը ստանալ և ժողովրդականք բարօրութիւն, հանգստու-
 թիւն և երջանկութիւն վայելել, որպէս և այժմ ներկայ Հայրա-
 պետը, հայ հոգեւորականութիւնը և ժողովրդականք նոյն հան-
 գստութիւնը, նոյն բարօրութիւնը վայելում են մեր այժմեան
 ամենաողորմած Թագաւոր Կայսր Ա.Լ.Է.ՔՍԱՆԴԻՐ Ա.Լ.Է.ՔՍԱՆԴԻՐՈՎ, ԶԻ

շնորհիւ, որում չկարողանալով այլով իւրք փոխարինել՝ կը ինդրեմ՝ յամենեցուն ի Ձէնջ միաբերան աղօթել, որ Ամենակարողն Աստուած կեանս երկարս և խաղաղակամս պարգեւեոցէ Նորին Կայսերական Մեծութեան, նորա Թագաւորութիւնը միշտ յազթող և անպարտելի արասցէ յազգաց յազգս և յորդոց յորդիս :

Յաւարտ՝ բոլոր սեղանակիցք ոտքի կանգնեցին և որոտաձայն երկարատե և « ուրա՛ - կեցցէ՛ » աղաղակելով պարպեցին շամպանիայի սկահակները: Երգիչ վարդապետք յաջմէ Օծելոյն կանգնած՝ երգեցին « Թագաւոր փառաց Աստուած, Հոգիդ կենդանարար շարականը: Վերջանալիս՝ Նորին Գերագոնցութիւն Պրեքիլ ոտքի կանգնած՝ առաջարկեց Օծեալ Հայրապետի կենացը ասելով:

« Նորին Պայծառափայլութիւն Իշխան Դանդուկով — Կորսակով յանձնեց ինձ, Վեհափառ Տէր, ներկայ լինել Ձերդ Վեհափառութեան օժմանը և ի կողմանէ իւր՝ ջերմագինս շնորհաւորել Ձերդ Վեհափառութեան Օծումը արտայայտելով խորին զգացմամբք բարեմաղթութիւններ:

« Վեհափառ Տէր, այս բաժակը առաջարկելով Ձերդ որբութեան կենաց, աղօթումեմ որ Ձեր Հայրապետութիւնը արգիւնաւոր լինի յօգուտ և ի պայծառութիւն Հայոց ազգի և եկեղեցւոյ » :

Այս առաջարկութիւնն ևս ընդունուեց յոտնկայս երկարատե կեցցէներով: Երգեցիկ վարդապետք եղանակեցին « Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ » շարականը և « Ի քօ իջեալ սեղի, զաթոռ Հայրապետի մեր հաստատեա » . . . երգը: Պէտք չէ մնումնալ որ ճաշկերութի ժամանակ դուրսը նուագումէր զինուորական երաժշտութիւն. 3½ ժամին վերջացաւ սեղանը. Մետրոպ և Ներսէս եպիսկոպոսները քաղեցին յատկացեալ սաղմոսները, աղօթքները և քարոզները, իսկ Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեան՝ օրհնեց սեղանը (Ատեն, ժամագիրք տպեալ յէջմ. 1862 Թ. երես 110):

Խոնեալ ժողովուրդը Մայր տաճարի ընդարձակ բազում դուրսճանումէր զինուորականաց նուագածութեամբ, մինչև որ տունջեան լուսատուին յաջորդեց արուեստական ճրագալոյցը: Արմերին հաստատուած հարիւրաւոր կանթեզները և ճրագները աստղերի պէս նշոյլներ էին արձակում և գաւթում կարգաւորում լապտերներն ու ջահերը լոյս էին սփռում: Եկեղեցու և սեղանի մէջտեղը եղած բայ տարածութեան վերայ երկու սիւների ծայրին հաստատուած, նկատիչ Պ. Առաքել Սագինեանցի նկարած

պատուազիրը Մ, ի վերուստ՝ թագ, առ ի շեղ՝ խաչ և գաւազան՝ գեղեցիկ պսակով շրջանակեալ՝ և Վեհարանի հանդէպ զանգա-
կատան ճակատին պատուոյ գունագեղ զրուագները ուշադրու-
թիւն էին գրուում:

Փոխ առ փոխ ձեմարանի աշակերտք՝ Վեհարանի արտաքին դրան
մտ խմբուած և զինուորական երաժիշաները փոքր ինչ հեռի եր-
գում և նուագումէին, աշակերտք՝ ազգային երգեր, իսկ զին-
ուորական երաժշտութիւնը՝ եւրոպական եղանակներ:

Երեկոյեան 8-որդ ժամը անց՝ ձեմարանի աշակերտք զանգա-
կատան սալարկի վերայ խմբուած հանգստեան աղօթքը կատարե-
ցին, որին ժողովուրդը գլխարաց մեծ ջերմեռանդութեամբ ունին-
գնելուց յետոյ, հետզհետէ տեղի տուեց գիշերային հանգստեան:

Վեհափառ Հայրապետի Ս. Օծումը շնորհաւորելու համար
հեռագրներ յամենայն կողմանց Ռուսաստանի, Պարսկաստանի
և Ցանկաստանի տեղումէին. քաղաքք և զիւրք, հոգևորական-
ներ, և աշխարհականներ, ընկերութիւններ, դպրոցական և այլ
հաստատութիւններ սրտեռանդն բարեմայլթութեամբ շնորհաւո-
րումէին նորին Վեհափառութեան Օծումը: Նոր Նախիջևանի
քաղաքագլուխ Պ. Գ. Սալթիկեան յայնումէր թէ, նոր Նախի-
ջևանը ցանկանումէր պատգամաւոր ուղարկել Ս. Էմիլիանին, սա-
կայն ժամանակը կարճ լինելով ամբողջ քաղաքը հեռագրով է
շնորհաւորում: Ելխաւէտօպօլի շնորհաւորական հեռագիրը 146
անձինք էին ստորագրել:

(ՕԾՄԱՆ ԵԱՄԱՆԱԿ ԿԱՐԴԱՅԱԾ ՃԱՌԸ)

ԱՍՏՈՒԱԾՐՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ,

Այսօր կատարի ի մեզ բան իմաստնոյն՝ որ մարգարէական իմն
տեսութեամբ զմայլեալ ի փառս նորոյս Սիօնի՝ երգէ յերգան ստե-
լով « Ելէք հայեցարուք, գտներք Սիօնի, յարջայն Սօղոմօն ի
պսակն՝ որով պսակեաց զնա մայր իւր յաւուր փեսայութեան իւ-
րոյ, և յաւուր ուրախութեան սրտի իւրոյ »: (Գ. 11):

Արդարև մանկունք Մօրս լուսոյ նորոյս Սիօնի զմայլեալ՝ տեսա-
նելով զպսակն իւրոյն Օծութեան՝ զպսակն լուսագարդ Հայրապե-
տութեան՝ զպսակն Առաքելական յաջորդութեան ի գլուխ Աս-
տուածընտիր Հօրդ հասարակաց գերափայլեալ՝ յաւուր փեսայու-

Թեան Ձեր Մօրս Լուսոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի, և յաւուր
ուրախութեան սրտի Ձերոյ՝ պերճացեալ ցնճան ընդ փառան շնոր-
հափայլեալս ի Ձեզ ի վերուստ. իսկ Մայրս մեր Սուրբ Եկեղեցին՝
որ պսակեաց զՁեզ փառօք օծութեան՝ ընդ մանկանցն՝ զորս ծնաւ
յաւազանն լուսոյ՝ փութայ ուխտնայարանութեամբ ողջունել
զՓեսայդ իջեալ ի պարտէզ խնկոց:

Ձի՛նչ այս հանդէս հրաշագեղ և հոգեզմայլ, հանդիսացեալ ժո-
ժովուրդք. զո՞վ արգօք տեսանէք առիթ այսպիսի հոգեխառն
ցնծութեան. և զի՛արդ ո՞չ բերկրեսցին սիրոք մեր և հոգի. այն
ինչ՝ ո՞չ եթէ ի լուր ընդոստուցեալ, այլ մեզէն ականատես եղեալ
սքանչելահրաշ հանդիսի Օծմանս՝ վայելեմք զշնորհն աստուածա-
պարգև:

Օ՛ր յիրաւի խնդութեան ողջոյն ազգի Հայոց, օ՛ր նշանաւոր տա-
րեկանաց մերոց. քանզի այսօր Հոգի Տեառն իջեալ՝ օծանէ գոե-
սանելի Փեսայն Եկեղեցւոյ ի Հայրապետութիւն Տանս Հայկազեան,
օծանէ յԱռաքելական յաջորդութիւն նախկին Լուսաւորչացն մե-
րոց Քաղէսոսի և Բարդուղիմէոսի, օծանէ յօրինաւոր ժառանգու-
թիւն Աթոռոյ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին:

Իու, Երջանկազարգ Հայրապետ, որ գերջանիկ Հօրն հաւա-
տոյ Հայաստանեայցս՝ իրաւամբ սխրագործութեանց Ձերոց՝ ժա-
ռանգէք այսօր զաթուր, երջանկագոյն և ս էք, շուրջ Հայրապե-
տական զաթուրով մտկաղեալ տեսանելով զբանաւոր Հօտ Ձեր, և
իբրև զպարբիսպ և զպահապան Հօտին՝ զԵկեղեցական դասակար-
գութիւնն շրջապատեալ:

Շնորհազարգ Սուրբ Հայրապետ, Մայրս մեր Սուրբ Էջմիածին
խնդայ այսօր և զուարճանայ, տեսանելով զիմանալի Փեսային իւ-
րոյ զարժանաժառանգ զՓոխանորդդ՝ իբրև զԱւետարանական աշ-
տանակն ի վերայ լերին Սիօնի կացեալ՝ լուսափայլութեամբ շնոր-
հաբաշխէք, որոց ի ստուերս կարծեաց և տարակայութեանց խար-
խափին:

Այո՛, մեծ է շնորհն, որ հրաշափառ Օծութեամբ Ձերով սփռի,
տարածանի և տարրանայ ի սիրտ և ի հոգիս ամենեցուն, որ ազ-
գային իմն եռանդեամբ վառին, և միանգամայն վառեն զ՛ի սիրոյ
ազգային առանձնայատկութեանց ցրտացեալ սիրտս:

Եւ Իուք Հանդիսացեալ ժողովուրդք, որ իբրև գնեղկայացու-
ցիչ մէն մի քաղաքի ազգայնութեան՝ արժանի գտայք ներկայօրէն

վայելիլ զշնորհն մեծահարաշ հանդիսի Օծմանս, խնդացէք յուսապատար բերկրութեամբ, զի վարթեալ ահա նորս մեր Սահակ և Մեսրոպ՝ վարթուցանել ի մանկուհս Սիօնի զհոգի գիտութեան և աստուածպաշտութեան, զհոգի ազգատիրութեան և կրօնասիրութեան: Յնծասցէ ուրեմն Մայրս մեր Սուրբ Էջմիածին ընդ փառս՝ զոր այժմ՝ վայելեաց շնորհաբաշխութեամբ տեսանելի Փեսայն իւր: Յնծասցեն և համայն դասք հոգևորականաց, զի եկն եհաս գարունն անուշահոտութեան խնկոց առսքինութեան, զոր այժմ՝ իսկ Օծալթեան հանդիսի վայելեաց, եկն ահա՛, որ արտափայլէ ի Սիօնէ զօրէնս՝ իբրև զՄովսիսեանն պատգամ ի լեռնէն Սինայ՝ տալ Եկեղեցոյ ի բարեկարգութիւն և եկեղեցականաց ի բարեվայելչութիւն:

Թող հնչեսցեն դարուց ի դարս բան և գիր՝ զայս հանգէս ազգային, զի արդարև ըստ Սաղմոսողին «Այսօր է, զոր արար Տէր, վասն բարեկենդանութեան ազգիս Հայոց՝ շնորհելով զՎեհափառ Տէրս մեր և Հայր:

Թող առ մեզ պատշաճեսցին ի ներկայս բանք Աւետարանին՝ յասելն «Եւ փեսաւէրքն ուրախ լինին վասն ձայնի փեսային»: Եւ զիմրդ ոչ ուրախացեալ բերկրեսցին սիրտք մեր — Հանգիստցեալ ժողովուրդք, և զիմրդ ոչ աւետեսցուք միմեանց զեկեալ հասեալ բարութիւնն, և ընդէ՛ր ոչ խնդակցութեամբ միմեանց պատմեսցուք զայս մեծահարաշ հանգէս ընդ ամենայն աշխարհ՝ ի լուր սիրելի ազգայնոց, որոց սիրտք բաբախին ի հեռուոր վայրս՝ ընդ աւետաւոր համբաւ շնորհաբաշխ Օծմանս, և հոգիք զուարճանան:

Օրհնեսցեն երկինք զվայելչութիւն փառաց Մայր Աթոռոյս Հայաստանեայց. Օրհնեսցէ զՇնորհազարդ Հայրապետս մեր՝ այն՝ որ խոստացաւ ընդ մեզ լինել ցկատարած աշխարհի. Օրհնեսցէ զմիաբանական ուխտ Մայր Աթոռոյս՝ այն՝ որ խոստացաւ լինել ի ժողովս՝ ուր ժողովեալ իցեն յանուն իւր. օրհնեսցէ և զհամայն ազգ. Հայոց՝ Քրիստոս, որ հրաւիրէ զամենայն ազինս զիմել առ ինքն հաւատով, յուսով և սիրով, և գտանել զկեանս յաւիտեանականս:

Օ՛ն ուրեմն մատիցուք ի համբոյր Սրբոյ Գագաթան և Աջոյն նորապսակ մերս Գերերջանիկ Հայրապետի՝ հայցելով զՀայրապետականն զօրհնութիւն, որով ազգ մեր և Եկեղեցի ունին բարո-

յուպէս բարգաւաճիլ աղբի ազգի բարեօք, և ձայնակցեալ Եկեղեցւոյն սրբոյ՝ ասասցուք —

« Այբիւր կենաց և փրկութեան մերոյ Հոգի Հօր և Որդւոյ՝ ի « յորմատոյն Յեսեայ բղխման գաւազանի հասեալ ժամու, շնոր- « հազարք պայծառացն զգաւազան իշխանութեան մերոյ Հայրա- « պետին, զի օրհնեսցուք զքեզ Տէ՛ր, այժմ՝ և յաւիտեան » : Ամէն :

Շարագրեալ ասաց ի ժամ՝ օծման Տ. ՄԱԿԱՐ

Կաթուղիկոսի՝ հոգևոր որդի Նորա

ՄԵՍՐՈՎԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ :

Ի 40 Նոյեմբերի 1885

Ի Ս. Էջմիածին :

Ո Ի Ղ Ե Ր Ձ

Ի Հանդէս օծման Սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Մայրաքոյն Պատրիարքի Արարատեան Համազգական Մայր Եկեղեցւոյ՝ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ Տեառն ՄԱԿԱՐԱՅ Առաջնոյ, և Ասպետի զանազան Կայսերական շքանշանաց :

Տարիողական՝ ձայն յեթերաց՝ կից ընդ ահեղ՝ որոտման.

Յերկիր սուրեալ՝ ընդ մէջ ցելեաց՝ զերկնից կամարն՝ ամպրոպեան :

Ելին Աթոռ՝ ընդ այն կամար՝ ընդ կապուտակ՝ երևի :

Չուարթնոց երամ՝ թեւապարփակ՝ անդ յերգ անդուլ՝ ակմբի :

Բամից զուարթնոց՝ պարագլուխ՝ Հրեշտակապետն Գաբրիէլ :

Վեհ յԱթոռոյն՝ աւանդ առնու՝ նաև պատգամ՝ մեզ բերել :

Մարգարտայեռ՝ թագ է աւանդն՝ և շափիւղեայ՝ ոսկեհոռու :

Եւ Գաւազան՝ եղեգնաձև՝ ցուպ հովուական՝ կարծր ի կուռ :

Արիւնագեղ՝ Քող ընդ նոսին՝ արեան Փրկչին՝ ապացոյց :

Չոր Նա ընդ իւր՝ ի համբառնալն՝ փառօք յերկինս՝ վերացոյց ¹⁾ :

Կան ի ձեռին՝ պերճ զուարթնոյն՝ երեք աւանդք՝ այս անդոյգ :

Պարգևք՝ բաշխեալք ի կողմանէ՝ Նուանձնութեանն՝ համազոյգ :

Ակնկառոյց՝ առ զուարթունն՝ կացուրգն համայն՝ կայ յակճիռ :

Թէ ո՛ւմ արդեօք՝ փիճակեսցին՝ մեծ այս պարգևք՝ երկնաձիր :

Բախճանական՝ ձայն յեթերաց՝ առ Գաբրիէլ՝ հաս անդէն :

Չառեալ պատգամն ընդփոյթ մեկնել՝ ընաւից կարծիս՝ փարաակել :

Կորովամիտ՝ այն զուարթուն՝ յայտնէ զպատգամ՝ հրամանին •
 Թէ « զՏէր ՄԱԿԱՐ՝ Աստուած ընտրեաց՝ յԱթոռ Մեծի Պարթևին » :
 Ապա զԹաղն՝ դնէ ի Գլուխն, Գլուխ կարգեալ՝ Հայկազանց •
 Զուարթ բարբառով՝ ասէ ցնա « Աստուած զՔեզ պսակեաց » :
 « Թագ այս բերէ՝ գնմանութիւն՝ Ահարօնեան՝ սուրբ խուրի¹) :
 Ի զօրանալ՝ ընդդէմ՝ թշնամեաց՝ հսկել հօտին՝ Հայրենի » :
 « Ոսկեճամուկ՝ ցուպս Հովուական՝ յահարկութիւն՝ ըմբոստաց •
 Ի հալածել՝ զգայլս ի հօտէ՝ ի սահմանաց՝ Հայրենեաց » :
 « Իւսած զայս Քող՝ անձեռագործ, պարզեալ տոմաբք՝ լուսափայլ,
 Պաշտօնէիցն՝ ակմբելոց, կրել յառաջուստ՝ նազաքայլ » :
 « Դեկավարիս ասնս Թորգոմեան՝ Վեհազնէիս՝ Մեծափառ •
 Զի մի՛ յերկիր՝ ծաւալեցցի՝ մաքուր շնչոյն՝ աուրեւառ » :
 Ի սպասու՝ Վեհափառիս՝ կան յաջ յահեակ՝ Սրբազանք •
 Ալօթանուէր՝ սուրբ հայցուածոցն՝ յերկինս սլանան՝ արձագանք :
 Կածառ խմբիցն՝ Սրբազանից՝ պայծառազարգ՝ հրաշատես •
 Շուրջ բոլորեալ՝ զանձամբ Վեհիս՝ հրճուին համակ՝ յայս հանդ **Պ**,
 Ոմն ի նոցունց՝ ըստ Մովսիսի՝ առեալ զեղջիւր՝ ի ձեռին •
 Իւզ անուշից՝ յերկնից բաշխեալ՝ ի գլուխն հեղու՝ Վեհանձինն²) :
 Աստար հրեշտակն՝ պատգոմաբեր՝ անդրէն յերկինս՝ սլանայ •
 Զպատգամացն՝ յամբողջ բերումն՝ Եռանձնութեանն՝ յայտնէ նա :
 Անդէն և անդ՝ պարբ անմահիցն՝ ինդան հրճուին՝ համօրէն •
 Ընդ մահացուացս՝ Եռանձնութեանն՝ տան զոհութիւն՝ փոխարէն :
 Մեծն Մասիս՝ զիւր շափառուկ՝ զարտմութեան՝ անփարատ •
 Ի Բաց մերժէ՝ ցնծայ պարէ՝ ի սիրտ վառեալ՝ անարատ :
 Երկնաթուիջ՝ յիւր գազաթանց՝ զմեծ զոհութիւն՝ յայն եթեր •
 Վերառաքէ՝ առ Արարիչն՝ փայլեալ ի դէմն առնութեք :
 Նա ինքն Մասիս լեառն լեբանց գոռ ի բարձանցն օդաչու •
 Վեհիս Մեծի ցանկայ մատչիլ՝ ոտիցն համբոյր՝ երկնաչու :
 Ահրճանակուռ յաղթ ի հիմանց՝ ընդ իւր գազաթ՝ պսակազարգ •
 որոտաձայն՝ տոյ աւետիս՝ նախնոյն Հայկայ՝ օլէզարգ :
 Յսխորտ ի ձայն նորին զարմից՝ և սերնդոցն՝ քաջազանց :
 Զնոյն կարդայ՝ նա զաւետիս, ձոյն տան կմախք ի շիրմաց :
 Նախնւսն Մեծի Լուսաւորչին՝ և յաջորդացն սուրբ ոսկերք :

Աւաջ առեալ՝ բերկրին ցնծան, գոգցես խօսին և համերբ:
 Հայկազնեան յոյս՝ սուրբ Աթոռ՝ զքող այրութեանդ սեւաթոյր.
 Ի բոց մերկեալ՝ հրձուեաց ինդան, զՓեսայդ գրգեան ի համբոյր:
 Անմահ Փեսայն՝ զայս սուրբ Աթոռ՝ զայս սուրբ աւանդ Հայրենեաց.
 Անախտ պահեալ և անարատ՝ Հօրդ Մեծի հաւատաց:
 Յոյս անխաբ է՝ յազգ Արամեան, թէ եռանդուն Դուք հոգևով.
 Նկրտեսջիք ի բողոք փայլել՝ զԱզգն և զԱթոռ՝ մեծ դթով:
 Ո՛վ Արարիչ՝ զմեր Հայրապետ՝ զմեր Մնող՝ հոգևոր.
 Նաև զԱթոռ՝ Մեծի Դիտիս՝ պահեան յաւերժ փառաւոր:
 Յնցումն սրտի՝ մեծին Մասեաց՝ նաև բանիցն արձագանք.
 Յագեալ ի յիղձ՝ դադար առին, դստար առցեն և իմ՝ բանք *):
 Ամենապատկառ ակնածութեամբ ուղերձէ՝
 Յովհաննէս Կահանայ Տէր Յակովբէանց Տէրեանցի:

1885 ամի ի Ս. Էջմիածին.

Ամսոյս 24-ին կիւրակէ օրը Վեհափառ Տ. Տ. Մակար Արքազնագոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց, Ռուստատանեայցս նուիրակ և Երուսաղէմայ Սուրբ Յակովբեանց Վանաց Միաբան Արժ. Հարց Մամբրէ և Նորընտիր լուսարարապետ Սահակ վարդապետներին ձեռնագրեց յաստիճան եպիսկոպոսութեան:

Թող Ամենաբարին Աստուած զօրավիզն լինի նորոգ ձեռնագրեալ սրբազան հարցր և իրանց կոչման մէջ արժանաւոր հովիւ հանդիսացնէ՝ Քրիստոսի եկեղեցւոյ բանաւոր հօտին:

Աղօթենք որ նոյնպիսի արժանաւոր հոգևորական մշակաց թիւը բազմանայ մեր ազգի մէջ:

Աղէքսանդրապօլ գաւառի Հաջիլար գիւղի Բարեկ. Յովհաննէս քահանայ և իւր եղբայր մեծ. պ. Բաղրամ ի յիշատակ իւրեանց հանգուցեալ հօր Քէորդ քահանայի Թամարեան նուիրեցին Մայր Աթոռոյս մի հարիւր բուրլի ընդ ձեռն Հոգ. Կառ. Աղէքսանդրապօլու. և մահտեսի Խաչատուր Ասանէթեան Աղէքսանդրապօլցի նուիրեց 25 բ. ընդ ձեռն Մինաս քահանայի Տ. Պետրոսեան:

Աստուած լուսաւորեսցէ յիշեալ բարեպաշտների ննջեցելոց հոգին. ամէն:

(*) Սկզբնատառք տանց ոտանաւորիս բաղհիւսեն «ՏԷՐ ՄԱԿԱՐ՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց»: